

## Լիլիթ Մատինյան

### ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՕԲՅԵԿՏԻՎ ՊԱՅԱՆՋ

**Էթնոհոգեբանություն, արժեհամակարգ, ազգային գաղափարախոսություն,  
ազգային գիտակցություն, ինքնաձանաչողություն, ազգային մշակույթ**

ՀՀ-ում վերջին տարիներին ազգային գաղափարախոսության անհրաժեշտության մասին հաճախակի են դարձել քննարկումները և մեկնաբանությունները, որոնք փաստում են, որ գոյություն ունի ազգային գաղափարախոսության մշակման օբյեկտիվ անհրաժեշտություն և հայ ժողովրդի հետագա զարգացումն ապահովող ազգային քաղաքականության իրականացում, որը կապահովի գլոբալացվող հասարակությունում ազգային արժեքների պահպանումը:

Սակայն բոլոր քննարկումներն ի վերջո շոշափելի արդյունքներ չեն տալիս և առ այսօր որևէ համակարգային քայլեր վերոնշյալ խնդրի շրջանակներում չեն իրականացվում գործնականորեն: Ազգային գաղափարախոսությամբ իրականացվող քաղաքականության պակասը հիմք է հանդիսանում օտար մշակույթի «ներմուծման» համար և պատճառ դառնում ազգային ավանդույթների խեղաթյուրման:

Ակամա անհրաժեշտություն է առաջանում առանձնահատուկ ուշադրություն դարձնել քննության առարկա երևույթի ճշգրիտ սահմանումներին ու գործնական կիրառությանը:

Գաղափարախոսությունը գաղափարների համակարգ է, որի ամենաբնորոշ ու կարևոր հատկանիշը սերտ առնչությունն է հասարակության հոգեբանության հետ: Ուստի տվյալ հասարակության գաղափարախոսությունը խարսխված է նրա աշխարհընկալման ու բարոյական չափանիշների վրա: Այլապես գաղափարախոսությունը կկտրվեր իր բովանդակությունից և չէր ընդգրկի հասարակության գիտակցության շերտերը: Ինչպես արդարացիորեն փաստում է Ա. Ենգոյանը, ազգային գաղափարախոսությունը միտված է ուղղորդելու ազգի ու պետության գործունեության բոլոր ոլորտները<sup>1</sup>:

Ազգային գաղափարախոսությունից են բխում պետության արտաքին քաղաքականությունը և անհատի վարքը կարգավորող գրված ու չգրված նորմերն ու դրույթները: Ազգային գաղափարախոսության ակունքը ազգի հոգեբանության և համազգային շահերի գերակայության դաշտում է, բայց նույն այդ ժողովուրդը կարիք ունի ուղղորդվելու ազգային գաղափարախոսության պահանջներով: Ազգային գաղափարախոսությունը ազգի կեցության փիլիսոփայությունն է: Եվ դա բնորոշ է

<sup>1</sup> Ազգային գաղափարախոսության հենասյունները: Հարցազրույց ԵՊՀ քաղաքական գիտության պատմության եւ տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր Աշոտ Ենգոյանի հետ: <http://www.hayzinvor.am/12297.html>:

հատկապես փոքր ազգերին, որոնք ապրում են ազգային գաղափարախոսությամբ և դրանից բխող կենսակերպով:

Ազգային գաղափարախոսության ջատագովներից Մուշեղ Լալայանը գտնում է, որ յուրաքանչյուր կենսունակ, իր առաքելության գիտակցությունն ունեցող ազգ ելնելով սեփական աշխարհըմբռնումից՝ սահմանում է իր արժեքների համակարգը, նպատակներն ու իղծերը, նախանշում հարատևման ռազմավարությունը, որոնց տեսական ամբողջությունը կազմում է տվյալ ազգի գաղափարախոսությունը, դառնում է մի տեսակ Ավետարան, որով նա առաջնորդվում է ամբողջ գոյության ընթացքում: Առանց այդ գաղափարախոսության որևէ ազգ կենսունակ չէ ազգերի գոյության պայքարում, նա դառնում է պատեհապաշտ, անսկզբունք, նպատակի և անելիքի մեջ չկողմնորոշվող և հաճախ դուրս է մնում պատմության ասպարեզից:

Ազգային գաղափարախոսությունը նաև ազգային գաղափարների համախումբ է: Ազգերի պատմության անկյունաքարային ամեն ժամանակահատված առաջ է մղում մեկ կամ մի քանի գաղափարներ, որոնք պատմական ընթացքի այդ պահին տվյալ ազգի համար դառնում են ոգեշնչման աղբյուր, պայքարի ուղեցույց: Իրենց կենսունակությունը չկորցրած ազգերի ընտրամին, սեփական կոչումին հավատարիմ, պարտավոր է վճռորոշ պահերին առաջադրել իր ժամանակի ազգային գաղափարը<sup>1</sup>: Ստացվում է, որ միևնույն ազգի անդամներին իրար հոգեպես, գիտակցորեն շաղկապող գաղափարների ու արժեքների համակարգի բացակայության դեպքում վերացական է դառնում տվյալ ազգի հետագա գոյապայքարի ու սեփական մշակույթ ու կացութաձև ունենալու մասին խոսելը: Ահա թե ինչու այն ազգերը, որոնք իրենց էթնիկ ծագմանը լուրջ են վերաբերվում, նույն լրջությամբ էլ կարողանում են սփյուռք ձևավորել, ինչը չի կարելի ասել «քաղաքացիությանը» նշանակություն տվող ժողովուրդների մասին: Անկախ տարբեր մեկնաբանություններից՝ ազգային գաղափարախոսությունը հայ և այլազգի հեղինակների կողմից դիտարկվում է հասարակության և պետության շարժիչ ուժ:

21-րդ դարում ազգերի առջև ծառայած են ավելի լուրջ հիմնախնդիրներ: Բոլոր հնարավոր ձևերով քարոզվող գլոբալացումը լուրջ վտանգ է դարձել էթնիկ արժեհամակարգերի պահպանման համար: Ազգային գիտակցության առաջին հենասյունը՝ լեզուն, կորցնում է իր կարևորությունը՝ տեղը զիջելով համամարդկային դարձած տերմինաբանությանը: Երբ լեզվական մտածողությունը ազգային չէ, կենցաղը և մշակույթը նույնպես վերածվում է անձև համակարգի, ինչի ականատեսը մենք եղանք խորհրդային տարիներին, երբ ռուսաց լեզուն շատ ակտիվ մտավ մեր կենցաղ և մշակույթ՝ նուրբ անջրպետ առաջացնելով ռուսախոս և հայախոս շերտերի միջև: Սակայն եթե 17-19-րդ դարերում Արևմտյան Հայաստանի ազատագրման հիմնահարցը դարձավ հայերին միավորող ազգային գաղափարախոսություն, ապա Արցախյան շարժումը նույնատիպ գործոն էր 20-րդ դարում, որը միավորեց աշխարհի բոլոր հայերին:

21-րդ դարում հայ ազգային գաղափարախոսության զարգացման հիմնասյուններ, ըստ Աշոտ Ենգոյանի, համարվում են միասնական հայրենիքի, յուրաքանչյուր

<sup>1</sup> Տես, Մ. Լալայան, Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ, Երևան 2008, էջ 3-8:

հայի բարեկեցության, Հայաստանում և նրանից դուրս ազգի բարոյական ուժի գաղափարները: Նա կարևորում է ազգին ծառայելու և սոցիալական արդարության գաղափարները ազգային գաղափարախոսության համատեքստում<sup>1</sup>:

Կարևոր գաղափարական հեմասյուններից է ազգի ինքնաճանաչումը: Աշխարհը հարգանք է տածում միայն այն ազգերի հանդեպ, որոնք նախ ճանաչում է իրենք իրենց և հետո նոր ներկայանում են ուրիշներին: Բայց ինչպե՞ս ճիշտ ճանաչել սեփական ազգը՝ ինքնագովության խաբկանքի մեջ չընկնելով: Այս առումով շատ կենսունակ ու բանական են Նժդեհի գաղափարները: Ըստ Նժդեհի՝ «Խաբկանքն, առաջին հերթին, ծնվում է զուտ տեսողական պատրանքներից. ինչպես ծովը հաճախ ընկալվում է քամու առաջացրած ալիքների տեսքով՝ ծով է ժողովուրդը, և ինչպես հողմներից առաջացած ալիքները չեն դրսևորում ծովի ողջ դիմամիկան, նրա զորությունը, ճիշտ այդպես ժողովուրդն իր մանրագործություններով չի սպառում այն, ինչ կա նրա հոգու խորքում: Ուրեմն լինում են խորքային ակեկոծություններ, որոնք ընդգրկում են բովանդակ ծովը, այդպես է նաև ժողովրդի մոտ: Ժողովրդի էությունը դրսևորվում է միայն ճակատագրական պահերին, երբ անհատները դառնում են միական ու միասիրտ, այլ խոսքով՝ դրսևորում հոգու միասնությունը»<sup>2</sup>:

Նժդեհը պետության և ազգի գոյատևման անհրաժեշտությունը կարևորում է նաև պատմության իմացությամբ. «Այն ժողովուրդների համար, որոնք իրենց պատմության մեջ հայտնաբերում են այն, ինչ մեծ գորությամբ դրված է իրենց արյան մեջ, այդ ժողովուրդների համար խորապես ցեղորեն ապրելը, ներցեղային բարոյականով առաջնորդվելը դառնում է անհրաժեշտություն հետևյալ պատճառներով.

ա. երբ իրենց վիճակվում է ապրել աննպաստ աշխարհագրական միջավայրում,

բ. երբ կորցնելով իրենց պետական անկախությունը, նրանք կորցնում են բնականոն գոյության կարելիությունը,

գ. երբ իրենց վտանգ են սպառնում թվով և քանակապես ավելի հզոր, ցեղորեն և կրոնապես օտար հարևանները»<sup>3</sup>:

Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում նույնատիպ տեսակետ է հայտնել «Հոգևոր ժառանգություն» պետական հայրենասիրական միավորումը, որ ազգային գաղափարախոսության նպատակը ազգի պահպանությունն ու վերածնունդն է համարում. «Մեր հայրենիքի պատմության ճգնաժամային շրջաններում ազգին փրկել են ռուս ժողովրդի հոգևոր ուժերի հզոր պաշարները: Այդ ֆենոմենի հիմքում ընկած է եղել համազգային ռուսական գաղափարախոսությունը»<sup>4</sup>:

Նախնադարյան ցեղերի և ժամանակակից հզոր, զարգացած ժողովուրդների ազգային գաղափարախոսությունները նույն խնդիրների հենքի վրա են կառուցված: Սակայն եթե սկզբում դա պարզունակ է եղել, ինչպես մարդկային ցեղերի

<sup>1</sup> Ազգային գաղափարախոսության հեմասյունները: Հարցազրույց ԵՊՀ քաղաքական գիտության պատմության եւ տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր Աշոտ Ենգոյանի հետ: <http://www.hayzinvor.am/12297.html>:

<sup>2</sup> Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2006, էջ 343:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 618:

<sup>4</sup> , , 1995, . 168:

փոխհարաբերությունները, ապա ժամանակի ընթացքում դարձել է չափազանց բարդ, ինչպես ժամանակակից ազգերի տարաբնույթ հարաբերությունները: Ուստի այն ժողովուրդները, որոնք բնության կողմից իրենց տրված ինքնապահպանման բնագործը չեն վերածում գիտականորեն հիմնավորված ազգային գաղափարախոսության, կործանվում են՝ իրենց տեղը զիջելով ավելի կազմակերպվածներին և կենսունակներին:

Ինքնապահպանման գոյապայքարը գիտնակաները տարբեր կերպ են մեկնաբանում:

Ավստրիացի գիտնական Կ. Լորենցը գտնում է, որ ագրեսիան իսկական առաջնային բնագործ է տեսակի պահպանման համար<sup>1</sup>: Անգլիացի փիլիսոփա Թոմաս Չոբսը իր աշխատության մեջ նշում է, որ ամենուրեք պետք է ձգտել խաղաղության, եթե դրան հասնել հնարավոր չէ, պետք է միջոցներ որոնել պատերազմ վարելու համար<sup>2</sup>: Իսկ ռուս գիտնականներ Խ. Բոկովը և Ս. Ալեքսեևը գրում են, որ Ռուսաստանի հասարակական-քաղաքական տևական ճգնաժամի պատճառներից մեկը հիմնավորված և խոր մշակված ազգային գաղափարախոսության բացակայությունն է<sup>3</sup>:

Ազգային ինքնաճանաչողության մեթոդաբանական կողմնորոշիչները հիմնարար նշանակություն են ստանում առանձնապես անցումային պահերին. անհատական ստեղծագործական ներուժը ուղիղ համեմատական է անձի ինքնաճանաչողության աստիճանին: Ստեղծագործ մտքի թռիչքը ցատկահեծքի կարիք ունի, և դա ազգի հոգևոր ներուժն է, նրա բյուրեղացումը՝ մտածելակերպի մեջ արտահայտված: Իսկ մտածելակերպը դրսևորվում է լեզվական ճկունության, հարստության միջոցով: Այլ խոսքով՝ ազգի քաղաքակրթության աստիճանը համաշխարհային մշակութային թատերաբեմում նրա այցետոմսն է:

Ամփոփելով ասենք, որ հայ ազգային գաղափարախոսության վերամշակումը և կիրառումը, որպես արդի ժամանակաշրջանի գերխնդիր պետք է միտված լինի հայ ազգի ինքնաճանաչողության բարձրացմանը՝ խարսխված հայ ազգի ծագման, հայերի արիականության, ներցեղային համերաշխության և միասնականության, մշակութային, լեզվական գաղափարական առանձնահատկությունների վրա:

Ազգային գաղափարախոսությունը չի կարող մշակվել պետական իշխանությունների կողմից և պարտադրվել ժողովրդին, որովհետև այն ժողովրդի ինքնապաշտպանության բնագործի դրսևորում է և հատուկ է յուրաքանչյուր ազգի, արտահայտում է ազգային շահերը, ելնում ազգային հիմնադրույթներից և ինքնաբերաբար ընդունելի է էթնոսի մեծամասնության կողմից: Տարբեր ժողովուրդներ դա արտահայտում են տարբեր ձևերով՝ կախված պատմության թելադրանքից. ոմանց համար դա հայրենիքի ազատագրության հարց է (Հայկական հարց, Հայ դատ, պահանջատիրություն), ուրիշների համար պետության ստեղծում է պատմական հայրենիքի ազատագրման

<sup>1</sup> Տե՛ս . . . , 1994, . 30:

<sup>2</sup> Տե՛ս . . . , . 1., . 1989, . 295:

<sup>3</sup> Տե՛ս X. X. . . . , 1996, . 9:

գնով (հրեական խնդիր), այլոց համար նվաճված ժողովուրդների հետապնդում և ոչնչացում (պանթուրքիզմ): Քանի որ մենք արդեն ունենք անկախ պետություն, ազգային գաղափարախոսությունը դառնում է հայրենիքի անվտանգության և պաշտպանության հայեցակարգ, որը ներառում է ռազմավարական, մարտավարական բազում ծրագրեր: Այդ ծրագրերը պետք է իրականացնեն ազգային հոգեկերտվածքով անհատները կամ կուսակցությունները:

21-րդ դարում հայ ազգի գոյապահպանման համար կային բազմաթիվ ծանր մարտահրավերներ: Անհրաժեշտ էին ազգային ինքնության կարևորագույն դիմագծերը՝ լեզուն, մշակույթը, պատմական հիշողությունը, ազգային մտածողությունը, բնավորությունը, հոգեբանությունը, նկարագիրը, ընտանիքը, կրոնը, կենցաղը, ճաշակը, ավանդույթները և սովորույթները մաքրել օտարածին ներթափանցումներից և պահպանել:

Մենք կրում ենք գենետիկական ժառանգություն՝ հոգեբանությամբ, հոգեկան կերտվածքով, ավանդույթներով և անգիտակցաբար ղեկավարվում ենք նախնիների ավանդած բարոյական նորմերով. «Մենք գենետիկորեն մեր նախնիներից կրում ենք նաև վարքագծի անգիտակից շարժիչներ»<sup>1</sup>: Սրանից բխում է նաև այն, որ ավանդույթներում են արտահայտվում տվյալ ազգության անցյալի հիշողությունը, պահանջմունքները, զգացումները, և ազգի հոգեբանության վրա գործում նշանակություն ունի մշակութային միջավայրի ազդեցությունը, որի պատմական զարգացման պրոցեսում յուրաքանչյուր ազգ ստեղծում է մշակութային արժեքների իր սեփական համակարգը, ահա թե ինչու ազգային գաղափարախոսությունը սերտորեն կապված է թե՛ էթնիկական հոգեբանության, թե՛ լեզվի և մշակույթի, թե՛ պատմական ժառանգության հետ: Ազգի խաղաղ ոչնչացումը սկսվում է պատմական հիշողության ոչնչացումով, ահա թե ինչու մշակույթի, կրթության և գիտության համակարգերը պետք է մշտապես գտնվեն պետության ուշադրության կենտրոնում և վեր դասվեն դասակարգային, կուսակցական մոտեցումներից:

**Լիլիթ Մատինյան, Հայ ազգային գաղափարախոսության վերանայումը որպես ժամանակի օբյեկտիվ պահանջ** – Հայ ազգային գաղափարախոսության վերամշակումը որպես մեր օրերում ծայրահեղ կարևոր հարց պետք է դիտարկել մշակութային, լեզվական և գաղափարական առանձնահատկություններից ելնելով և հաշվի առնել մի շարք էթնիկ յուրահատկություններ. հայ ժողովրդի ազգային, գենետիկ, արիական ծագումնաբանությունը, ցեղային արժանապատվությունը, հայերի միասնականությունը, նպատակասլացությունը հայ ժողովրդի ինքնագիտակցության վերարժևորման գործում: Տվյալ գաղափարախոսությունը կարող է նպաստել ազգային առանձնահատկությունների պահպանմանը ժամանակակից գլոբալացվող աշխարհում, ինչն էլ իր հերթին պետք է դիտարկել որպես պայքարի հզոր միջոց գլոբալիզացման դեմ: 21-րդ դարում հայերը բախվում են ինքնապահպանման և գոյատևման խնդրին, հետևաբար անհրաժեշտ է չհանդուրժել ազգային կենցաղամշակույթի մեջ օտար տարրերի ներթափանցումը և այնպիսի կարևոր ազգային դիմագծերի աղավաղումը, ինչպիսին լեզուն է, մշակույթը, պատմական հիշողությունը, ազգային բնավորությունը, հոգեբանությունը, կենցաղը, ճաշակը, ավանդույթները:

<sup>1</sup> , - , 1995, . 139:

**Lilit Matinyan, The review of the Armenian national ideology as an objective demand of the time –**

The adaptation of the Armenian National Ideology as an extremely urgent problem nowadays must base on cultural, linguistic, ideological characteristics taking into consideration a number of specifications such as Aryan genealogy, tribal dignity, the unity of the Armenian people and mustaimat reconsidering the identity of the Armenian nation. The mentioned ideology can promote the maintenance of national values which can be a powerful means of fighting against globalization. In the twenty-first century Armenians face the problem of maintenance and survival, so it's necessary to be intolerant of the penetration of foreign elements to the national culture and the distorting of such important national traits as language, culture, historical recollection, national character, psychology, family, religion, living standards, taste, customs and traditions.

*Լիլիթ Մատինյան, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հարակից երկրների  
պատմության ամբիոնի հայցորդ, դասախոս*

